# ՋՐՎԵԺԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒԽՏԻ ՏՈՆԸ

1980-ական թթ. վերջերին Ջրվեժի բնակիչները դիմում են Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին պեղի եկեղեցին գործող դարձնելու խնդրանքով: Նորին Սրբության ձեռամբ էլ 1991 թ. մայիսի 3-ին վերաբացվում է Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցին և հոգևոր հովիվ է նշանակվում Արժանապատիվ Տ. Նորայր քահանա Բաղդասարյանը:

Երբ 1996 թ. ստեղծվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Կոտայքի թեմը, թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի կարգադրությամբ 1996 թ. նոյեմբերից Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու հոգևոր հովիվ նշանակվեց Արժանապատիվ Տ. Կյուրեղ քահանա Տալյանը:

Արդեն երրորդ տարին է, ինչ մայիսի առաջին կիրակի օրը Ջրվեժում նշում են Ս. Կաթողիկե եկեղեցու Ուխտի տոնը: Եվ ահա 2003 թ. մայիսի 4-ն է, կիրակի: Տ. Կյուրեղ քահանայի քարոզի խոսքն է հնչում հավատացյալներով լեփ-լեցուն եկեղեցում. «Այսօր Աշխարհամատրան կիրակին է կամ Կանաչ կիրակին, այլ խոսքով՝ Քրիստոսի Եկեղեցու նավակատիքն է: Մեկ Ընդհանրական Եկեղեցու, աշխարհասփյուռ Եկեղեցու տոնն է այսօր: Տարվա մեջ այդպիսի երկու տոն կա՝ գարնանը և աշնանը: Այս Աշխարհամատրան կիրակին նաև տոնն է Երուսաղեմում կառուցված Ս. Հարություն տաճարի: Իսկ ինչո՞ւ է այս կիրակին Կանաչ անվանվում: Որովհետև Քրիստոսի Եկեղեցին Նրա հարությունից հետո և մանավանդ Սուրբ Հոգու գալուստից հետո ծաղկեց, կանաչեց, փարթամացավ և սփռվեց ամբողջ աշխարհում: Եվ այս տարի Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու ուխտի օրը, որ ամեն տարվա մայիսի առաջին կիրակին է, երկու տարի առաջ հաստատեցինք այն, շատ խորհրդանշական կերպով համընկել է Աշխարհամատրան կիրակիի հետ:

Նոր ժողովուրդ, ինչպիսի՞ն պետք է լինի Տիրոջ ժողովուրդը: Պետք է լինի՞ նույնը, ինչ որ դրսում շրջող մարդի՞կ, արդյոք չպե՞տք է Տիրոջ ժողովուրդը տարբերվի, Աստծո ընտրած ժողովուրդը չպե՞տք է տարբերվի: Ապա էլ ինչի՞ համար է Աստված ընտրում մարդուն, ինչի՞ համար է Իրեն սեփական ժողովուրդ ընտրում: Չէ՞ որ ընտրում է որպես վկայություն ամբողջ մարդկության առջև, ընտրում է որպես վկայություն ամբողջ աշխարհի համար: Չէ՞ որ Տերն ասաց. «Դուք եք աշխարհի լույսը: Դուք եք աշխարհի աղը»: Ահա ինչպիսին պետք է լինի Աստծո ժողովուրդը: Սեփական ժողովուրդ Աստծո, սրանից վեհ, սրանից բարձր, սրանից մեծ կոչում արդյոք կարո՞ղ է լինել ամբողջ տիեզերքում»:

Աստվածայինին հաղորդվելու տոնական տրամադրությունը Ս. Պատարագի ավարտից հետո եկեղեցու բակում շարունակվեց հոգևոր և ազգագրական երգերի ներքո: Այնուհետև մատաղ բաժանվեց հավատացյալներին, ովքեր միատեղ և միախորհուրդ համախմբված իրենց արժանապատիվ հոգևոր հովվի և բարեշնորհ Գագիկ սարկավագ Բաբայանի հետ վայելում էին միասնական հոգևոր ընտանիքի սերը:

Տոնախմբության ընթացքում Արժանապատիվ Տ. Կյուրեղ քահանա Տալյանն անդրադառնալով օրվա հոգևոր խորհրդին՝ ասաց. «Մեր եկեղեցում երեխաները շատ են, և դա շատ է ուրախացնում մեզ բոլորիս: Շատ են երեխաները, որոնք սիրում են եկեղեցին, կապ-

ված են եկեղեցու հետ: Աստիճանաբար ավելանում է Ջրվեժի բնակիչների կապը եկեղեցու հետ: Իսկ եկեղեցական համայնքն ընդհանուր առմամբ կազմված է ամենատարբեր վայրերից եկած հավատացյալներից: Երևանից և ամենատարբեր վայրերից են գալիս այստեղ: Շատ հոգևորականներ են Պատարագ մատուցել Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցում և բոլորն էլ զգացել են այն ջերմ մթնոլորտը, որ տիրում է մեզ մոտ: Մի խոսքով, մենք մի ընտանիքի պես ենք այստեղ, և դա իսկապես հարստություն է»:

*ՍԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*